ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հուլիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

85
(3294)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ ՍԴ-ՈՒՄ. Ո՞Վ Է ՀԵՂԻՆԱԿԸ

Մինչ Սահմանադրական դատարանը քննում է Ազգային Ժողովի ընտրությունների արդյունքները վիճարկող դիմումները, իշխանությունը խորհրդարանում քննարկում է հենց նույն դատարանի դատավորների վարձատրության բարձրացման օրենսդրական նախաձեռնությունը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախագիծը հեղինակել եւ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հաստատմանն է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, որը միաժամանակ Սահմանադրական դատարանում ներկայացնում է իշխող կուսակցության դիրքորոշումն ընտրությունների արդյունքների վիճարկման գործով:

Խոսքը «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում եւ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ նախատեսող նախագծերի մասին է:

Նախագծով առաջարկվում է Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի եւ դատավորների համար սահմանել աշխատանքային ստաժի համար հավելավճարների նոր համակարգ: Ըստ ներկայացված հիմնավորման՝ հավելավճարը կտրամադրվի պաշտոնավարման երկրորդ տարվանից սկսած՝ աճող սկզբունքով. երկրորդ տարում՝ 20 տոկոս, երրորդ տարում՝ 35 տոկոս, իսկ չորրորդ տարվանից սկսած յուրաքանչյուր հաջորդ տարի՝ նախորդ տարվա հավելավճարի չափից եւս 10 տոկոսով ավելի:

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը խորհրդարանում դեռ գարնանը՝ ապրիլին, հայտարարել էր, որ գործող վարձատրության կառուցվածքը «համարժեք չէ Սահմանադրական դատարանի դատավորների բարձր իրավական կարգավիճակին, սահմանադրական լիազորությունների ծավալին եւ նրանց գործունեությանը բնորոշ բարձր պատասխանատվությանը»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Դավիթ Ղազինյանը պահվում է Ազգային անվտանգության ծառայության մեկուսարանում: Ինչպես հայտնի է, Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է Հակակոռուպցիոն կոմիտեի միջնորդությունը եւ Դավիթ Ղազինյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել երկամսյա կալանքը: Ղազինյանին մեղադրանք է առաջադրվել ընտրակաշառք տալու նախապատրաստության հատկանիշներով: Վերջինս առաջադրված մեղադրանքը չի ընդունում, քանի որ որեւէ մեկի հետ ոչինչ չի խոսել այդ թեմայով: Հիշեցնենք, որ հունիսի 17-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համաձայնություն էր տվել Դավիթ Ղազինյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն եւ նրան ազատությունից զրկելուն: Դատախազությունը նման միջնորդություն էր ներկայացրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղազինյանը պատգամավորի թեկնածու է եւ օգտվում է օրենքով սահմանված անձեռնմխելիությունից: Ղազինյանի փաստաբան Արամ Վարդեւանյանը ԿԸՀ նիստից հետո հայտարարել էր, որ ներկայացված միջնորդությունը բավարար իրավական հիմքեր չի պարունակում: «Որեւէ տվյալ չի եղել, նման միջնորդություն տեւական ժամանակ չէի հանդիպել»,- նշել էր նա:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իրավապահ համակարգում այս օրերին փաստացի կարճատեւ դադար է հայտարարված: Իրավապահ մարմիններում սպասողական տրամադրություններ են, եւ բոլորի ուշադրությունը կենտրոնացած է Սահմանադրական դատարանի առաջիկա որոշման վրա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մինչեւ հուլիսի 4-ը նախաքննական մարմինները հիմնականում զբաղված կլինեն նախապատրաստական աշխատանքներով՝ ամփոփելով արդեն հարուցված քրեական գործերը, ինչպես նաեւ ուսումնասիրելով ձեռք բերված օպերատիվ տվյալները: Իսկ Սահմանադրական դատարանի հուլիսի 4-ի որոշումից հետո իրավապահները պատրաստվում են նոր ընթացք եւ առավել ակտիվ փուլ հաղորդել ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների նկատմամբ հարուցված քրեական վարույթներին: Այդ ժամանակ էլ առավել հստակ կդառնա, թե ինչ զարգացումներ են սպասվում ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարներին եւ նրանց թիմակիցներին: Քաղաքական հրահանգները տրված են, անունները հայտնի են, մնում է՝ համապատասխան հոդվածները կարվեն գործիչների վրա, եւ ռեպրեսիաների նոր փուլը կմեկնարկի:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) շարունակում է մերժել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների վերաբերյալ քաղաքացիների բողոքները: Հունիսի 26-ին հանձնաժողովը, որի նախագահն է Մարիամ Գալստյանը, հերթական անգամ որոշեց չհարուցել վարույթ վարչապետի նկատմամբ՝ փաստացի պաշտպանելով նրա վիճահարույց հայտարարություններից մեկը: Խոսքը վերաբերում է Նիկոլ Փաշինյանի այն պնդմանը, ըստ որի՝ «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինքների եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկած քաղաքացիների շուրջ 70 տոկոսը ընտրակաշառք է ստացել: Հունիսի 19-ին քաղաքացի Սեմյոն Բաբայանը երկու դիմում էր ներկայացրել ԿԿՀ՝ պահանջելով վարույթ հարուցել վարչապետի նկատմամբ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված էթիկայի կանոնների հնարավոր խախտման հիմքով: Դիմումատուն մատնանշել էր, որ ԿԸՀ պաշտոնական տվյալներով հիշյալ քաղաքական ուժերին քվեարկել է 544 հազար 451 քաղաքացի: Փաշինյանի ներկայացրած հաշվարկից հետեւում է, որ ընտրակաշառք ստացածների թիվը կարող է հասնել մոտ 381 հազար մարդու: Բաբայանի գնահատմամբ՝ վարչապետը, առանց որեւէ դատական ակտի կամ ապացուցված հանգամանքի, փաստացի կոռուպցիոն վարքագծի մեջ է կասկածում Հայաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների՝ նրանց ներկայացնելով որպես ընտրակաշառք ստացած անձինք:

⇨ *էջ 3*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՐ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ՝ ԵՂԵԼ Է ՔՎԵՆԵՐԻ ԿԵՂԾՈՒՄ»

ArmLur.am-ը զրուցել է «Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածու Մանուել Մանուկյանի հետ:

- Սահմանադրական դատարանում քննվում է ընտրությունների արդյունքների վերաբերյալ դիմումը, որը ներկայացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Ի՞նչ սպասելիքներ ունեք այս գործընթացից:

- Անկեղծ ասած, մեծ ակնկալիքներ չունեմ՝ հաշվի առնելով, որ, իմ կարծիքով, գործող իշխանության բազմաթիվ ներկայացուցիչներ կամ նրանց հետ կապ ունեցող անձինք հայտնվել են դատական համակարգում եւ Սահմանադրական դատարանում: Այնուամենայնիվ, հույս ունեմ, որ հաշվի կառնվեն միջազգային իրավական չափանիշները, արդարությունն ու ճշմարտությունը, եւ իրավական գործընթացը կընթանա օրենքի շրջանակներում: Մեր քաղաքացիները եւս օրինական ճանապարհով պաշտպանում են իրենց քվեն, քանի որ համոզված են, որ տեղի են ունեցել լուրջ խախտումներ:

- Դուք հայտարարում եք, որ տեղի են ունեցել ընտրախախտումներ: Ի՞նչ նկատի ունեք:

- Մեր գնահատմամբ՝ եղել է քվեների կեղծում: Օրինակ՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շուրջ 60 հազար ձայնի հաշվարկի վերաբերյալ լուրջ հարցեր են առաջացել: Երբ նախկինում հայտարարվում էր, թե «ձեռքերս կկտրեմ, ընտրակեղծիք չեմ անի», այսօր փաստերն ու ժամանակը, մեր կարծիքով, հակառակն են ապացուցում: Այդ պատճառով էլ քաղաքացիները համախմբվել են՝ պաշտպանելու իրենց քվեն:

- Ինչպե՞ս եք գնահատում նախընտրական փուլը: Ի՞նչ բացթողումներ եք արձանագրել:

- Ընդդիմադիր քաղաքական ուժերը քարոզարշավն իրականացրել են օրենքի սահմաններում: Եթե իշխանությունը խոսում է ընտրակաշառքների կամ այլ խախտումների մասին, ապա դրանց բացահայտման եւ կանխման պատասխանատվությունը հենց իրավապահ մարմինների եւ գործող իշխանության վրա է: Միաժամանակ բազմաթիվ հարցեր կան ընտրական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, այդ թվում՝ զինվորների վաղաժամ քվեարկության եւ այլ ընթացակարգերի մասով: Այդ ամենը, մեր գնահատմամբ, պահանջում է մանրակրկիտ քննություն:

- Ի՞նչ է ձեր հիմնական պահանջը:

- Մեզ համար ամենակարեւորը քաղաքացիների քվեն պաշտպանելն է: Թե ինչ իրավական լուծում կտրվի՝ ամբողջ ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչում, թե առանձին ընտրատեղամասերի արդյունքների վերանայում, պետք է որոշվի իրավական գործընթացի արդյունքում: Կարեւորն այն է, որ յուրաքանչյուր քվե հաշվարկվի արդար եւ օրինական ձեւով:

- Դուք ներկայացնում եք «Բարգավաճ Հայաստան» կուսակցությո՞ւնը:

- Ո՛չ, ես «Հայաստան» դաշինքի թիմի անդամ եմ: Սակայն այստեղ խոսքը որեւէ քաղաքական ուժի նեղ շահերի մասին չէ: Եթե խախտվում են ցանկացած քաղաքական ուժի կամ քաղաքացիների ձայները, դա արդեն արդարության խնդիր է, ոչ թե միայն քաղաքական:

- Ի՞նչն է, ըստ Ձեզ, ամենամեծ խնդիրը այս ընտրություններում:

- Մեր կարծիքով՝ հրապարակված բազմաթիվ տվյալներ ցույց են տալիս, որ եղել են անհամապատասխանություններ եւ հնարավոր խախտումներ: Օրինակ՝ որոշ դեպքերում ներկայացվել են բացատրություններ տեխնիկական սխալների կամ օպերատորի վրիպակի մասին, սակայն այդ ամենը պետք է մանրակրկիտ ուսումնասիրվի: Եթե կան հիմնավոր կասկածներ, դրանք պետք է լիարժեք քննվեն:

- Ինչպե՞ս եք գնահատում իշխանության լեգիտիմությունը:

- Մեր քաղաքական գնահատմամբ՝ գործող իշխանությունը չի վայելում այն հանրային վստահությունը, որի մասին հայտարարում է: Եթե առաջնորդվեին նախկինում հնչեցրած քաղաքական խոստումներով, ապա պետք է հաշվի առնեին հանրության դժգոհությունը եւ համապատասխան քաղաքական պատասխանատվություն կրեին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՐԶՊԵՏԸ ԿԳՆԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանին արձակուրդ կտրամադրվի: Վարչապետի համապատասխան որոշումը ստորագրվել է հունիսի 30-ին: Մարզպետն արձակուրդում կգտնվի 2026 թվականի հուլիսի 6-ից 21-ը ներառյալ: Ըստ որոշման՝ նրան կտրամադրվի ընդհանուր առմամբ 12 աշխատանքային օր, որից 8 օրը 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի չօգտագործված մասն է, իսկ 4 օրը՝ 2026-2027 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի հերթական հատվածը: Ահարոն Սահակյանի բացակայության ընթացքում նրան կփոխարինի եւ Կոտայքի մարզպետի պարտականությունները ժամանակավորապես կկատարի մարզպետի տեղակալ Վասակ Վարդանյանը:

ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏՆԵԼ

Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիների համար կստեղծվի անհայտ կորած անձանց, ինչպես նաեւ նրանց հնարավոր թաղման վայրերի վերաբերյալ գաղտնի (կոնֆիդենցիալ) տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն: Ինչպես հաղորդում է ադրբեջանական ԱՊԱ (APA) գործակալությունը, այս մասին միջազգային համաժողովի ժամանակ հայտարարել է Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության պետի տեղակալ Շարաֆատ Հասանովը: Այս հնարավորությունը հասանելի կդառնա Անհայտ կորած անձանց միջազգային հանձնաժողովի (ICMP) հետ համագործակցությամբ ներդրվող Տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի (IDMS) եւ դրան կից «Առցանց հարցումների կենտրոնի» միջոցով: Երկու երկրների քաղաքացիները կկարողանան տվյալներ փոխանցել խիստ անոնիմ պայմաններում, իսկ ստացված տեղեկություններն օգտագործվելու են բացառապես մարդասիրական նպատակներով՝ անհայտ կորածների ճակատագիրը պարզելու համար: Ըստ ադրբեջանական կողմի հավաստիացումների՝ տեղեկատվություն տրամադրող անձը ոչ մի պարագայում եւ որեւէ հանգամանքում պատասխանատվության չի ենթարկվելու, իսկ համակարգի սերվերները տեղակայվելու են Ադրբեջանի տարածքում, եւ դրանց մուտքի իրավունք կունենան միայն հատուկ վերապատրաստում անցած աշխատակիցները:

Ա. Վ.

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

«Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ շարունակվող խաղաղության գործընթացը, ինչպես նաեւ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերը հույս են ներշնչում: Սա կայունության եւ համագործակցության ավելի մեծ հեռանկարներ է ստեղծում մեր ընդարձակ տարածաշրջանի համար»: Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ի Վրաստանի բյուրոն, այս մասին Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի (PABSEC) 67-րդ լիագումար նիստում ունեցած իր ելույթի ընթացքում հայտարարել է Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին: Նրա խոսքով՝ այսօր տարածաշրջանն ունի մեծ ներուժ՝ ամրապնդելու իր դերը որպես առեւտրի, տրանսպորտի, էներգետիկայի եւ թվային կապակցվածության կենտրոն:

«Հետագա համագործակցությունն ամրապնդելու համար մենք պետք է ներկայիս ժամանակահատվածը դիտարկենք ոչ միայն մարտահրավերների, այլեւ նոր հնարավորությունների տեսանկյունից»,-նշել է խոսնակը: Պապուաշվիլին հավելել է, որ այս ամսվա սկզբին Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի լիարժեք շահագործման հանձնումը, որը Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի համատեղ ռազմավարական նախագիծն է, փոխշահավետ համագործակցության եւ տարածաշրջանի զարգացման գործում ներդրված համատեղ ջանքերի վառ օրինակ է:

ԿՄԵԿՆԻ ԹՈՒՐՔԻԱ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը կմեկնի Թուրքիա: Որոշման մեջ, մասնավորապես, ասվում է. «-Համաձայն «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին 2026 թվականի հուլիսի 1-2-ը գործուղել Թուրքիայի Հանրապետություն (Ստամբուլ)՝ «Երկրաշարժերի առողջապահական ազդեցության նվազեցմանն ուղղված առողջապահական համակարգերի պատրաստվածություն եւ արձագանքում» խորագրով նախարարական համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Անահիտ Ավանեսյանի Թուրքիայի Հանրապետություն գործուղման օրապահիկի ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Անահիտ Ավանեսյանի Թուրքիայի Հանրապետություն գործուղման ճանապարհածախսը եւ գիշերավարձի ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել Թուրքիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

Հայաստանի կառավարության 2026 թվականի հունիսի 25-ի №932-Ա որոշմամբ՝ մինչեւ 2027 թվականի հուլիսի 1-ը երկարաձգվել է վիզայի ժամանակավոր ազատականացման ռեժիմի գործողությունը: Քբոսաշրջության կոմիտեից տեղեկացնում են, որ որոշումը վերաբերում է Բահրեյնի, Սաուդյան Արաբիայի եւ Օմանի քաղաքացիներին, ինչպես նաեւ ԱՄՆ-ի, Եվրոպական միության, Շենգենյան գոտու երկրների, ԱՄԷ-ի, Բահրեյնի, Կատարի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի եւ Օմանի կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին, որոնք կարող են այցելել Հայաստան առանց մուտքի վիզայի՝ սահմանված կարգով: Միաժամանակ հաստատվել է երկրների նոր ցանկը, որից հանվել են Եմենը եւ Սուդանը: «Այս որոշումը միտված է խթանելու զբոսաշրջությունը, ամրապնդելու միջազգային կապերը եւ հեշտացնելու Հայաստան այցելությունները»,- նշված է Կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ընդունել է Հայաստանում հավատարմագրված Եվրոպական միության անդամ պետությունների դեսպաններին: Հանդիպմանը մասնակցել է նաեւ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը: Դեսպան Մարագոսը շնորհավորել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին 2026 թվականի հունիսի 7-ին Հայաստանում անցկացված համապետական խորհրդարանական ընտրությունների արդյունքների առիթով: Ընդգծվել է Եվրոպական միության պատրաստակամությունը՝ շարունակելու սերտ համագործակցությունը Հայաստանի հետ՝ ի նպաստ ժողովրդավարական արժեքների ամրապնդման, կայունության եւ զարգացման: Վարչապետ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել Եվրոպական միությանը եւ անդամ պետություններին՝ ընտրությունների առիթով հնչեցված գնահատականների եւ շնորհավորանքների համար: Վարչապետն ընդգծել է Հայաստանի ժողովրդավարական գործընթացներին եւ բարեփոխումների օրակարգի առաջմղմանը Եվրոպական միության աջակցության կարեւորությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Եվրամիություն համագործակցության օրակարգին վերաբերող հարցեր: Մտքեր են փոխանակվել բարեփոխումների օրակարգի, իրավունքի գերակայության ամրապնդման, տնտեսական համագործակցության, ենթակառուցվածքների զարգացման, էներգետիկ դիմակայունության, ինչպես նաեւ տարածաշրջանային կայունության եւ խաղաղության օրակարգի շուրջ:

Անդրադարձ է կատարվել Հայաստան-Եվրամիություն գործընկերության հետագա խորացմանն ուղղված քայլերին: Կարեւորվել է բարձր մակարդակի քաղաքական երկխոսության շարունակականությունը եւ փոխգործակցության ընդլայնումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում:

«ԿԱՆԱՉ ԼՈՒՅՍ» ՏՎԵՑ

ՄԵՐԺՈՒՄՆԵՐԻ ԾՂԹԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) շարունակում է մերժել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների վերաբերյալ բողոքների բողոքները: Հունիսի 26-ին հանձնաժողովը, որի նախագահն է Մարիամ Գալստյանը, հերթական անգամ որոշեց չհարուցել վարույթ վարչապետի նկատմամբ՝ փաստացի պաշտպանելով նրա վիճահարույց հայտարարություններից մեկը:

Խոսքը վերաբերում է Նիկոլ Փաշինյանի այն պնդմանը, ըստ որի՝ «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինքների եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկած քաղաքացիների շուրջ 70 տոկոսը ընտրակաշառք է ստացել:

Քաղաքացու դիմումը. «Մեղադրվում է յուրաքանչյուր վեցերորդ քաղաքացին»

Հունիսի 19-ին քաղաքացի Սեմյոն Բաբայանը երկու դիմում էր ներկայացրել ԿԿՀ՝ պահանջելով վարույթ հարուցել վարչապետի նկատմամբ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված էթիկայի կանոնների հնարավոր խախտման հիմքով:

Դիմումատուն մատնանշել էր, որ ԿԸՀ պաշտոնական տվյալներով հիշյալ քաղաքական ուժերին քվեարկել է 544 հազար 451 քաղաքացի: Փաշինյանի ներկայացրած հաշվարկից հետեւում է, որ ընտրակաշառք ստացածների թիվը կարող է հասնել մոտ 381 հազար մարդու: Բաբայանի գնահատմամբ՝ վարչապետը, առանց որեւէ դատական ակտի կամ ապացուցված հանգամանքի, փաստացի կոռուպցիոն վարքագծի մեջ է կասկածում Հայաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների՝ նրանց ներկայացնելով որպես ընտրակաշառք ստացած անձինք:

Դիմումատուն ընդգծել էր, որ նման հայտարարությունները կարող են վնասել պետության հեղինակությանը, խաթարել ներդրումային միջավայրը, ինչպես նաեւ կասկածի տակ դնել անմեղության կանխավարկածի եւ մարդու արժանապատվության պաշտպանության սկզբունքները:

ԿԿՀ-ի հիմնավորումը. «Կային սոցիոլոգիական տվյալներ»

Հանձնաժողովը ուսումնասիրել է վարչապետի՝ հունիսի 17-ի Ազգային Ժողովի ելույթն ու հունիսի 18-ին տված ճեպազրույցը եւ եկել այն եզրակացության, որ Փաշինյանի արտահայտություններն ունեցել են «փաստական հենք»: ԿԿՀ-ի գնահատմամբ՝ վարչապետն իր պնդումները հիմնավորել է սոցիոլոգիական հարցումների արդյունքներով եւ ընտրակաշառքի վերաբերյալ հարուցված քրեական վարույթների առկայությամբ:

Հանձնաժողովը նաեւ արձանագրել է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում խոսքի ազատության սահմաններն ավելի լայն են, իսկ վարչապետի հայտարարությունները չեն ունեցել վիրավորելու նպատակ, այլ ուղղված են եղել քաղաքական քննադատությանը եւ հնարավոր իրավախախտումների գնահատմանը:

Արդյունքում ԿԿՀ-ն եզրակացրել է, որ վարչապետի վարքագծում բացակայում են էթիկայի կանոնների առերեւույթ խախտման հատկանիշները, եւ մերժել է վարույթ նախաձեռնելու պահանջը:

Սա առաջին դեպքը չէ, երբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հրաժարվում է քննության առնել Նիկոլ Փաշինյանի հասցեին ներկայացված դիմումները: Վերջին ամիսներին տարբեր քաղաքացիներ եւս փորձել են նախաձեռնություն ցուցաբերել վարչապետի հրապարակային հայտարարությունների եւ վարքագծի վերաբերյալ, սակայն բոլոր դիմումները նույն ճակատագրին են արժանացել՝ մերժվել են դեռեւս նախնական փուլում:

Այս ֆոնին ավելի ու ավելի հաճախ են հնչում հարցադրումներ՝ արդյո՞ք ԿԿՀ-ն գործում է որպես անկախ վերահսկող մարմին, թե՞ քաղաքականապես զգայուն հարցերում նախընտրում է չմտնել իշխանության հետ առճակատման դաշտ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Վրաստանի ներքին գործերի նախարար Սուլխան Թամազաշվիլիին: Վարչապետը ողջունել է վերջինիս այցը Հայաստան եւ կարեւորել Հայաստանի եւ Վրաստանի իրավապահ մարմինների միջեւ համագործակցության հետեւողական զարգացումը: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ երկկողմ հարաբերություններում առկա է փոխգործակցության մեծ ներուժ, որի իրացմանը էապես նպաստում են նաեւ նման փոխայցելությունները եւ բարձրաստիճան ակտիվ շփումները: Վարչապետը կարեւորել է երկու երկրների ՆԳ նախարարությունների համատեղ ծրագրերը, մասնավորապես, հանցավորության, ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարում, ինչպես նաեւ ներքին անվտանգության մակարդակի էլ ավելի բարձրացման գործում: Սուլխան Թամազաշվիլին նշել է, որ արդյունավետ քննարկումներ է ունեցել Հայաստանի գործընկերների հետ, այդ թվում՝ համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Նրա համոզմամբ՝ դրանք նոր ազդակ կհաղորդեն երկկողմ կապերի ամրապնդմանը՝ ի նպաստ առկա մարտահրավերներին առավել արդյունավետ դիմագրավելուն:

Ջրուցակիցները մտքեր են փոխանակել երկու երկրների միջեւ համագործակցությանն ու տարբեր ուղղություններով հետագա քայլերին վերաբերող հարցերի շուրջ:

ՄՈՒՏՔԻ ՆՈՐ ՊԱՀԱՆՋ

Ռուսաստանի Դաշնություն առանց վիզայի ռեժիմով մեկնող օտարերկրացիների, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացիների համար 2026 թվականի հուլիսի 1-ից, ուժի մեջ է մտնում նախնական պարտադիր գրանցման պահանջը: ՌԴ մուտք գործելու համար քաղաքացիներից այսուհետ պահանջվելու է նախապես գրանցվել «RuID» (Госуслуги RuID) միասնական համակարգում: Ուղեւորությունից առաջ անհրաժեշտ է ներբեռնել RuID պաշտոնական հավելվածը եւ լրացնել համապատասխան հայտը: Կանոնակարգի համաձայն՝ մուտքի թույլտվության հարցումը պետք է ուղարկել սահմանը հատելուց նվազագույնը 72 ժամ առաջ (առավելագույնը՝ 90 օր շուտ): Բացառիկ ու արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են մերձավոր ազգականի ծանր հիվանդությունը կամ մահը, հայտը թույլատրվում է ներկայացնել մեկնումից մինչեւ 4 ժամ առաջ: Հավելվածում գրանցման փուլն անցնելու համար ճամփորդից պահանջվում է մուտքագրել անձնագրային տվյալները, վերբեռնել լուսանկար, նշել այցելության նպատակն ու մուտքի եւ ելքի նախատեսվող ժամկետները: Որոշակի դեպքերում համակարգը կարող է պահանջել նաեւ ձայնային նմուշ՝ նախնական կենսաչափական նույնականացում կատարելու նպատակով: Միեւնույն ժամանակ, առցանց գրանցումը չի ազատում սահմանային անցակետերում իրականացվող ստանդարտ ստուգումներից. ուղեւորները սահմանին նախկինի պես կարող են անցնել լուսանկարահանման եւ մատնահետքերի հանձնման ընթացակարգերով: Այս նոր իրավակարգավորումը չի վերաբերում Բելառուսի քաղաքացիներին, մինչեւ 6 տարեկան երեխաներին, ինչպես նաեւ այն անձանց, ովքեր Ռուսաստան են մեկնում վիզայով կամ ունեն դիվանագիտական ու պաշտոնական հատուկ կարգավիճակ: Ռուսական կողմի փոխանցմամբ՝ նորարարության հիմնական նպատակը միգրացիոն վերահսկողության ամբողջական թվայնացումն է: Համակարգի միջոցով ստեղծվում է օտարերկրացու թվային պրոֆիլը, որը հետագայում կիրառվելու է թե՛ պետական ծառայություններից օգտվելիս, թե՛ միգրացիոն այլ գործընթացներում:

Ա. Վ.

ՎՐԵԺ

ՈՎ ԷՐ ՕԳՆԵԼ, ՈՐ ՍՊԱՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեն դաժանությամբ հայտնեց, որ հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է Ռուսամ Ստեփանյանի հոր սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ին Կոմիտասի պողոտայի 44 շենքի բակում անհայտ անձը տարբեր հրազեններով կրակոցներ է արձակել «Toyota» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ռ.Ս.-ի ուղղությամբ եւ դիմել փախուստի, ինչի հետեւանքով վերջինս տեղափոխվել է հիվանդանոց եւ ստացած հրազենային վնասվածքներից մահացել: Քրեական վարույթի շրջանակում իրականացված մեծածավալ վարութային եւ ապացուցողական գործողությունների, ինչպես նաեւ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Ռոբերտ Ստեփանյանի սպանությունը Ա.Խ.-ի օժանդակությամբ կատարել է դատապարտված Արթուր Ասրյանը («Կուկ»), որը տնային կալանքի տակ գտնվելով, պոկել էր պրոբացիայի սարքը եւ Նոր տարվա գիշերը գնացել էր Կոմիտասի պողոտայի 44 շենքի բակ, որտեղ ապրում էր Չաղ Ռուստամի հայրը ու սպանել նրան:

Ըստ ArmLur.am-ին հասած լուրերի՝ Արթուր Ասրյանը, սպանելով Չաղ Ռուստամի հորը՝ Ռոբերտ Ստեփանյանին, վրեժ էր լուծել քրեական հեղինակություն Ֆազի՝ Սերգեյ Գրիգորյանի սպանության համար՝ վենդետա:

Հիշեցնենք, որ 2024 թվականին հունիսի 11-ին Երեւանի Շինարարների փողոցում Գրիգորյանին սպանել էին իր իսկ մեքենայում: Այս սպանության գործով տնային կալանքի տակ է հեղինակություն Ռուստամ Ստեփանյանը՝ Չաղ Ռուստամը: Եւ ահա Սերգեյ Գրիգորյանի սպանությունից մեկ տարի անց սպանեցին Չաղ Ռուստամի հորը՝ Ռոբերտ Ստեփանյանին, իր շենքի բակում:

Արդյունքում, քննիչի միջնորդության հիման վրա հսկող դատախազի կողմից Արթուր Ասրյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը), 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի եւ ռազմամթերքի ապօրինի շրջանառությունը) եւ 264-րդ հոդվածի 1-ին մասով (գույքը ոչնչացնելը կամ վնասելը), իսկ Ա.Խ.-ի նկատմամբ՝ 46-155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությանն օժանդակելը): Արթուր Ասրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, իսկ Ա.Խ.-ի վերաբերյալ կայացվել է կալանավորման որոշում եւ հայտարարվել հետախուզում: Ա.Ս.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

475 ՈՉ ՍԹԱՓ ՎԱՐՈՐԴ

Հունիսի 22-ից 29-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 5647 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 162 ավտոմեքենա: Մասնավորապես, հայտնաբերվել է ոչ սթափ 199 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 167 անձ: Հայտնաբերվել է հաշվառման համարանիշի հետ կապված՝ 12, չամրակապված վարելու՝ 1234, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 39 վարելու ընթացքում ծխելու՝ 492, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 282, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 33 եւ 2135 այլ իրավախախտում: 129-ը մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 186-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 128-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 33-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 91 անձ: Նույն ժամանակահատվածում մարզերում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 21168 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 334 տրանսպորտային միջոց: Հայտնաբերվել է ոչ սթափ 276 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 409 անձ: Հայտնաբերվել է նաեւ հաշվառման համարանիշի հետ կապված՝ 71, չամրակապված վարելու՝ 5557, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 435, վարելու ընթացքում ծխելու՝ 744, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 797, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 207, արագության գերազանցման՝ 3639 եւ 6598 այլ իրավախախտում: 305 ավտոմեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 796-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 1208-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 205-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: 21 վարորդ տուգանվել է վարելիս նվագարկչի՝ ստանդարտին չհամապատասխանող լրացուցիչ ուժեղացուցիչներ օգտագործելու համար: Բացի այդ, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 41 անձ:

ՎՐԱԵՐԹ

Հունիսի 28-ին վրաերթ է տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 15:20-ի սահմաններում Շիրակի մարզի բնակիչ 33-ամյա Արտուշ Հակոբյանն իր վարած «Jeep Cherokee» մակնիշի ավտոմեքենայով Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցում վրաերթի է ենթարկել 2 հետիոտնի: Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, վարորդը փախուստի չի դիմել, օգնել է վրաերթի ենթարկվածներին տեղափոխվել Գյումրու բժշկական կենտրոն: Դեպքի փաստով քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վրաերթի ենթարկվածների ինքնությունը: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ վրաերթի ենթարկվածները կանայք են: Վարորդը ենթարկվել է սթափության փորձաքննության, եղել է սթափ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՄԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից «Դավիթ 77» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հրուշակեղենի եւ հացաբուլկեղենի արտադրամասում (ք. Երեւան, Մաշտոցի 3) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները, մասնավորապես՝

- հատակների մակերեւույթները վնասված են եղել, հեշտորեն չեն լվացվել, ախտահանվել, ցամաքեցվել,
- պատերի մակերեւույթները եղել են անհարթ, պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող նյութերից,
- սանհանգույցի դուռը բացվել է դեպի արտադրական շինություն:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կասեցվել է հրուշակեղենի եւ հացաբուլկեղենի արտադրամասի արտադրական գործունեությունը, մինչեւ հայտնաբերված խախտումները վերացնելը:

ԹՄՐԱՄԻՋՈՑ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

Մալաթիայի համայնքային ոստիկանները ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հունիսի 23-ին՝ ժամը 12:10-ին, խուզարկություն են իրականացրել 33-ամյա տղամարդու բնակարանում: Հայտնաբերվել է 1 կիլոգրամ եւ 750 գրամ տարողությամբ 6 ապակյա տարա՝ ամբողջությամբ լցված դեղնականաչավուն, մանրացված եւ չորացված զանգվածով, կանեփի 40 կանաչ բույս, ինչպես նաեւ մոխրացած հետքերով մեկ ծխամորճ: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

***

Ոստիկանության գվարդիայի ծառայողները նույն օրը՝ ժամը 12:15-ին, Ազատության պողոտայի հասցեներից մեկից, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու վերաբերյալ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա, ձերբակալել եւ Քանաքեռ-Զեյթունի բաժին են տեղափոխել 23-ամյա երիտասարդի:

Անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 1,31 գրամ ընդհանուր քաշով թղթե փաթեթ՝ լցված դեղնականաչավուն զանգվածով, ինչպես նաեւ մոխրացած հետքերով մեկ բժշկական կաթոցիչ: Երիտասարդի հայտարարության համաձայն՝ հայտնաբերվածը մարիխուանա է, որը գնել է անձնական օգտագործման նպատակով: Երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

14–ԱՄՅԱ ԱՂՋԿԱ ՄԱՐՄԻՆ

Հունիսի 28-ին տեղեկություն է ստացվել, որ շտապօգնության բժիշկները կանչով մեկնել են Ջերմուկ քաղաքում գործող «Օլիմպիա» առողջարան, որտեղ հայտնաբերել են երեխայի մարմին: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված վայր է մեկնել ոստիկանության Ջերմուկի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Հայկ Բաբայանի գլխավորությամբ: Տեղում ոստիկանները պարզել են, որ մահացածը Կոտայքի մարզի բնակիչ 14-ամյա Ս. Կ.-ն է, ով նույն օրը «Օլիմպիա» առողջարանի համարներից մեկի սենյակի մուտքի մոտ ինքնազգացողությունը կտրուկ վատանալու հետեւանքով հարազատների ներկայությամբ հանկարծամահ է եղել: Դեպքի փաստով ոստիկանության Ջերմուկի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն:

ԿԵՂԾ ԽՄԻՉՔ ՈՒ ԾԽԱԽՈՏ

Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Արվավիր քաղաքի Երեւանյան փողոցի մի բնակիչ ապօրինի պահում է զենք-զինամթերք, թմրամիջոց, նաեւ ձեռք բերում եւ իրացնում է կեղծ ալկոհոլային խմիչք ու անակցիզ ծխախոտ: Հունիսի 17-ին նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակում նույն փողոցում գտնվող Արմավիր քաղաքի 53-ամյա բնակչի վաճառքի կետում կատարվել է զննություն: Հայտնաբերվել է 16 դեղահաբ, սվին-դանակ, նաեւ՝ առանց ակցիզի 24 շիշ կեղծ օղի, տնային պայմաններում պատրաստված օղիով եւ կոնյակով լցված պլաստիկ 120 շիշ ու 12 հազար 246 տուփ առանց դրոշմանիշի ծխախոտ: Հետագա միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել են, որ դեղատոմսով նշանակվող դեղամիջոց «Դիազեպամը» 53-ամյա տղամարդուն իրացրել է նրա 47-ամյա համաքաղաքացին: Նույն օրը 53-ամյա տղամարդը ձերբակալվել է, ներկայացվել Արմավիրի մարզային քննչական վարչություն ու տեղափոխվել ձերբակալվածների պահման վայր: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

● Հանրապետությունում հունիսի 26-ից 29-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 20 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉՈ՞Ւ Է ՄԵԾ ՀՈՂ ՆՎԻՐԵԼ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային, պաշտոնական կայքը հայտնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին է դիմել Նարինե Մելիքսեթի Կարապետյանը իր սեփականությունը հանդիսացող, Դիլիջան համայնքի ք. Դիլիջան, Աղբյուր Սերոբի փողոց թիվ 16 հասցեի 0.2889 հա հողամասը որպես սեփականություն անհատույց փոխանցելու (նվիրել) Դիլիջան համայնքին: Դիլիջան համայնքի ավագանին 2026 թվականի հունիսի 23-ի թիվ 1196-Ա որոշմամբ համաձայնություն է տվել Դիլիջան համայնքի ք. Դիլիջան, Աղբյուր Սերոբի փողոց թիվ 16 հասցեի 0.2889 հա հողամասը որպես նվիրատվություն Դիլիջան համայնքին ընդունելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հունիսի 30-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի եւ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ որոշել է՝

1. Նարինե Մելիքսեթի Կարապետյանի կողմից որպես նվիրատվություն Դիլիջան համայնքին ընդունել Դիլիջան համայնքի ք. Դիլիջան, Աղբյուր Սերոբի փողոց թիվ 16 հասցեի 0.2889 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 11-003-0711-0027):

2. Կնքել հողամասի նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Դիլիջան համայնքի ք. Դիլիջան, Աղբյուր Սերոբի փողոց թիվ 16 հասցեի 0.2889 հա հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Շատ կասկածելի գործարք է, կասկածահարույց նվիրատվություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքի ՀՀ ընտրողների ռեգիստրի բաժնում որոնում տալով՝ պարզել եմ, որ 1977թ. ծնված Նարինե Մելիքսեթի Կարապետյանը Երեւանի Արաբկիր համայնքի բնակիչ է: Դիլիջան քաղաքում բնակելի եւ հասարակական կառուցապատման հողերի շուկայական գինը թանկ է, 2889 քառակուսի մետր մակերեսով հողամասի շուկայական արժեքը շատ մեծ է: Երեւան քաղաքի Արաբկիր համայնքի բնակչուհին ինչո՞ւ պետք է իրեն պատկանող, տուրիստական համբավ ունեցող Դիլիջան քաղաքի Աղբյուր Սերոբի փողոցում գտնվող 2889 քառակուսի մետր բնակելի կառուցապատման հողը նվիրաբերեր Դիլիջան համայնքին: Այս գործում կա հանելուկ, չհրապարակված փաստեր, որոնք կարող են բացահայտել տարօրինակ նվիրատվության իրական պատճառները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ԿԱՆԱՉ ՋՐԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում կանաչ ջրածնի արտադրության զարգացման հեռանկարները:

Հիշեցվել է, որ Ներդրումային կոմիտեի հինգերորդ նիստի շրջանակում որոշվել էր ստեղծել ջրածնի հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, որը պետք է աշխատանքներ իրականացներ կանաչ ջրածնի ոլորտի զարգացման, դրա առավելությունների, արտադրության մեթոդների եւ տեխնոլոգիաների բացահայտման ուղղությամբ: Ընդգծվել է, որ սույն խորհրդակցության նպատակը Հայաստանում կանաչ ջրածնի արտադրության զարգացման շուրջ աշխատանքային խմբի եւ խորհրդատվական ընկերությունների ուսումնասիրությունների արդյունքում մշակված առաջարկների վերաբերյալ քննարկում իրականացնելն է:

Հաջորդիվ՝ներկայացվել է կանաչ ջրածնի զարգացման իրավական շրջանակը, կիրառման ոլորտները, անդրադարձ է կատարվել երկարաժամկետ ռազմավարական լուծմանը, որն ուղղված է լինելու էներգետիկ համակարգի ածխածնազերծմանը, արտանետումների կանխարգելմանը, կանաչ տաքսոնոմիայի պահանջներին եւ այլն: Մանրամասներ են ներկայացվել կանաչ ջրածնի արտադրության ծրագրային առաջարկների, մասնավորապես՝ «BDO ADVISORY» եւ «CIVITTA» խորհրդատվական ընկերությունների կողմից կանաչ ջրածնի արտադրության եւ ինտեգրման վերաբերյալ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաեւ կանաչ ջրածնի արտադրության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ սցենարներին:

Ներկայացված ուսումնասիրությունների եւ առաջարկների շուրջ ծավալվել է քննարկում, ներկայացվել են դիտարկումներ էներգետիկ փոխակերպման մեջ կանաչ ջրածնի արտադրության մեթոդների շուրջ:

Վարչապետը կարեւորել է աշխատանքային խմբի եւ խորհրդատվական ընկերությունների կողմից տրամադրված ուսումնասիրությունները, ընդգծել գիտական համայնքի հետ համագործակցությամբ եւ միջազգային փորձի ներդրմամբ կանաչ ջրածնի արտադրության պիլոտային ծրագրի իրականացման անհրաժեշտությունը: Երկրի ղեկավարը հանձնարարել է առաջիկայում ներկայացնել զեկույց՝ պիլոտային ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

2026-2027 ուսումնական տարում ՀՀ պետական ավագ դպրոցներում 10-րդ դասարանի ընդունելությունն առաջին անգամ իրականացվելու է էլեկտրոնային եղանակով՝ հայտագրման միջոցով:

Հայտագրումն իրականացվելու է առցանց՝ երկու քայլով.

Քայլ 1 - Մուտք գործեք https://my.emis.am/ հարթակ եւ բացեք օգտատիրոջ էջը: Էջը բացելու մանրամասն քայլերը ներկայացված են «Գրանցում my.emis.am» տեսաուղեցույցում:

Քայլ 2 - Եթե արդեն անցել եք նույնականացում եւ https://my.emis.am/ հարթակում ունեք ձեր էջը, ապա սպասեք հայտագրման մեկնարկին, որպեսզի ընտրեք դպրոցը: Հայտագրման քայլերը ներկայացված են «Ավագ դպրոցում հայտագրում» տեսաուղեցույցում:

Հայտագրման, դպրոցի տնօրենին դիմում ներկայացնելու, ինչպես նաեւ դպրոցի հետ պայմանագիր կնքելու ողջ գործընթացը թվայնացված է եւ հնարավոր է իրականացնել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ծնողի կողմից ստեղծված էջով:

Հայտագրումն իրականացվելու է երկու փուլով:

Փուլ առաջին

Հուլիսի 20-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ օգոստոսի 2-ը՝ ժամը 24:00-ը ներառյալ, հայտագրումը բաց կլինի արտոնություններ ունեցող երեխաների համար (արտոնությունները տեսանելի կլինեն համակարգում): Արտոնություններից կարող են օգտվել.

տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաները,

տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաները,

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչեւ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող ներքոնշյալ խմբերի երեխաները՝

ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների երեխաները կամ «Պետական նպաստների մասին» օրենքով եւ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող եւ ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաները,

խնամակալության տակ գտնվող երեխաները,

հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաները:

Արտոնությունից կարող են օգտվել նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաները, եթե ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) մինչեւ հայտագրման մեկնարկը՝ հուլիսի 20-ը, ԿԳՄՍՆ էլեկտրոնային հասցեին (secretariat@escs.am) ուղարկել է դիմում եւ համապատասխան տեղեկանքներ՝ ըստ սահմանված կարգի:

Նշված արտոնությունները վերաբերում են ինչպես հայերենով, այնպես էլ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ հաճախողներին:

Փուլ երկրորդ

Օգոստոսի 4-ին՝ ժամը 09:00-ից, տասներորդ դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցմամբ դասարանների ընդունելության համար, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) համար: Հայտագրում կիրականացվի նաեւ այն սովորողների համար, որոնց ծնողներից մեկը պատկանում է նշված խմբերից որեւէ մեկին, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է: Համակարգը բաց է նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար, որոնց ծնողները ցանկանում են երեխաներին հայտագրել հայերենով ուսուցմամբ դասարաններում:

Երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի քանակից:

Օգոստոսի 11-ին՝ ժամը 09:00-ից, հայտագրում կիրականացվի նաեւ հետեւյալ խմբերի համար՝ ծնողների ընտրությամբ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում.

օտարերկրյա քաղաքացիներ,

երկքաղաքացիներ,

քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչներ),

ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաներ երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Հայտագրման անհրաժեշտություն չկա այն դպրոցներում, որոնցում ընդունելությունը կիրականացվի սահմանված ներքին ընթացակարգերով.

մասնագիտացված դպրոցներ,

բարձրագույն ուսումնական հաստատությունների ենթակայությամբ գործող դպրոցներ,

հանրակրթական դպրոցների «Արհեստական բանականություն» սերունդ դասարաններ,

միջնակարգ դպրոցներ կամ վարժարաններ, որոնցում ծնողի դիմումի համաձայն՝ սովորողները կփոխադրվեն նույն ուսումնական հաստատության կրթության երրորդ աստիճան:

Հայտագրումը կշարունակվի ողջ ուսումնական տարվա ընթացքում:

● *Հանրապետությունում հունիսի 26-ից 29-ը գրանցվել է 3 դեպք՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման:*

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ

ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ Է

ՎՏԲ-Հայաստան Բանկի ֆինանսական աջակցությամբ Newmag հրատարակչությունը ընթերցողների ուշադրությանն է ներկայացրել Ալեքսանդր Դյումայի «Երեք հրացանակիրները» վեպի նոր հայերեն հրատարակությունը: Գրքի շնորհանդեսը կայացավ Newmag Summerfest 2026 գրքի փառատոնի շրջանակում: Հրատարակության առանձնահատկությունն այն է, որ վեպն առաջին անգամ է թարգմանվել հայերեն անմիջապես ֆրանսերեն բնագրից: Սա հնարավորություն է տվել առավելագույն ճշգրտությամբ պահպանել հեղինակի լեզվի ոճային առանձնահատկությունները, ստեղծագործության գեղարվեստական ինքնատիպությունն ու գաղափարական ամբողջականությունը՝ հայ ընթերցողին ներկայացնելով վեպը հնարավորինս մոտ բնագրին:

«Աջակցելով մշակույթի, կրթության եւ ընթերցանության զարգացմանն ուղղված նախաձեռնություններին՝ Բանկը շարունակում է իր ներդրումն ունենալ այնպիսի ծրագրերի իրականացման գործում, որոնք նպաստում են համաշխարհային գրական ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանը հայ ընթերցողների շրջանում»,- նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«Դյումայի ոճն առանձնանում է իր արտահայտչականությամբ, վառ գեղարվեստական պատկերավորմամբ եւ նուրբ հումորով: Նոր թարգմանության ընթացքում մեր գլխավոր նպատակը հենց այդ առանձնահատկությունների պահպանումն էր, որպեսզի հայ ընթերցողը հնարավորություն ունենա վեպը զգալ եւ ընկալել այնպես, ինչպես դա կանխամտածվել է հեղինակի կողմից: Շնորհակալություն ենք հայտնում ՎՏԲ-Հայաստան Բանկին այս կարեւոր նախագծին ցուցաբերած աջակցության եւ համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունները մայրենի լեզվով հրատարակելու գործում ունեցած արժեքավոր ներդրման համար»,- նշել է Newmag հրատարակչության տնօրեն Արտակ Ալեքսանյանը:

«Երեք հրացանակիրները» վեպի նոր հայերեն հրատարակությունը շուտով հասանելի կլինի հանրապետության բոլոր հայտնի գրախանութներում:

Ծանոթագրություն

Վեպի ֆրանսերեն բնագրում դ'Արտանյանն իրեն համեմատում է «հայազգի դոն Հաբեթի» (don Japhet l'Armenien) հետ, որը ֆրանսիական գրականությունում հայտնի է որպես պարծենկոտ եւ ինքնագովեստով աչքի ընկնող կերպար: Այս գրական ակնարկը, որը բացակայում է վեպի ռուսերեն թարգմանության մեջ, բացահայտվել է թարգմանիչ Սամվել Գասպարյանի կատարած հետազոտական աշխատանքների արդյունքում:

ՎՏԲ-Հայաստան Բանկը

վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՆՎԵՐ ԵՐԵՎԱՆԻՆ Գ

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊՈՒՐԱԿԸ ԿԲԱՐԵԿԱՐԳՎԻ

Երեւանի քաղաքապետարանի եւ IDBank-ի միջեւ կնքված համագործակցության հուշագրով ազդարարվեց Մոսկովյան պուրակի բարեկարգման լայնածավալ ծրագրի մասին:

Բանկի 35-ամյակի առթիվ իրականացվող նախաձեռնությունը կդառնա նվեր մայրաքաղաքին եւ երեւանցիներին՝ ուղղված հանրային տարածքների զարգացմանն ու կանաչ միջավայրի բարելավմանը: Երեւանի ամենասիրված վայրերից մեկը քաղաքին կվերադառնա նոր շնչով՝ ավելի բարեկարգ, լուսավոր եւ հարմարավետ միջավայրով: Նախագծով նախատեսվում է ընդլայնել եւ վերականգնել կանաչ գոտիները, ներդնել ժամանակակից լուսավորության համակարգեր, արդիականացնել հանգստի գոտիները եւ պուրակը դարձնել ավելի գրավիչ ու կենսունակ տարածք:

IDBank-ի վարչության նախագահ Միհր Աբրահամյանի խոսքով՝ IDBank-ի համար սա պարզապես համագործակցության հուշագիր չէ, այլ Բանկի 35-ամյակի առիթով գլխավոր նվերը մայրաքաղաքին: «Մոսկովյան պուրակը Երեւանի ամենասիրված վայրերից է: Հենց այդ պատճառով էլ մենք առանց երկար վարանելու համաձայնեցինք ֆինանսավորել Կենտրոն վարչական շրջանից ստացված առաջարկը՝ բարեկարգել եւ նոր շունչ հաղորդել Մոսկովյան պուրակին: Ուրախությամբ պետք է փաստեմ, որ միայն վերջին 5 տարիների ընթացքում IDBank-ի կողմից բնապահպանական տարբեր ծրագրերի շրջանակում տնկվել է ավելի քան 50.000 ծառ՝ վերականգնելով անտառապատ տարածքները: Այս նախագիծն այդ ճանապարհի տրամաբանական շարունակությունն է: Շնորհակալ ենք Երեւանի քաղաքապետարանին եւ բոլոր գործընկերներին այս կարեւոր նախաձեռնությունը կյանքի կոչելու համար»,- նշեց Միհր Աբրահամյանը: Քաղաքապետարանի համար այս ծրագիրը համայնք-մասնավոր հատված համագործակցության հաջողված օրինակ է, երբ բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը վերածվում է տեսանելի, չափելի եւ երկարաժամկետ քաղաքային արդյունքի:

Երեւանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը հատուկ ուշադրություն դարձրեց համայնք-մասնավոր հատված համագործակցության կարեւորությանը: «Նմանատիպ համագործակցությունները զգալի ազդեցություն ունեն քաղաքի միջավայրի եւ էկոհամակարգի փոփոխման մեջ: Համայնքը հսկայական աշխատանք է տանում քաղաքը բարեկարգելու ուղղությամբ: Իր հերթին մասնավոր հատվածը նույնպես իր մասնակցությունն ու ներդրումն է ունենում այդ գործում: Հենց այս համատեղ ջանքերն ու սիներգիայի էֆեկտն են բերում երկարաժամկետ եւ կայուն արդյունքի»,- ընդգծեց Պետրոս Պետոյանը:

Մոսկովյան պուրակի բարեկարգման ծրագիրը եւս մեկ քայլ է Երեւանի կանաչ, հարմարավետ եւ մարդակենտրոն քաղաքային միջավայրի ձեւավորման ճանապարհին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Գ

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գյուղատնտեսության եւ զբոսաշրջության ոլորտի 27 ձեռներեցներ եռամսյա ինտենսիվ դասընթացների արդյունքում հնարավորություն են ստացել շահավետ պայմաններով ֆինանսավորում ներգրավել Հայէկոնոմբանկից՝ ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի շրջանառու ֆոնդի շրջանակում:

«ԻՐԻՍ RECONOMY Աքսելերատոր ծրագրի» շրջանակում ԻՐԻՍ բիզնես ինկուբատորը Հայէկոնոմբանկի հետ գործընկերությամբ տասնյակ ՓՄՁ-ների հնարավորություն է տվել հարստացնել բիզնես գիտելիքները եւ մշակել ներդրումային ծրագրեր բիզնեսի աճի, ընդլայնման եւ մասշտաբավորման համար:

ՓՄՁ ներկայացուցիչներն ամիսներ շարունակ աշխատել են փորձառու մենթորների հետ, զարգացրել իրենց բիզնես գաղափարները, կատարելագործել բիզնես ռազմավարությունները եւ ձեռք բերել նոր գիտելիքներ թվային եւ կանաչ վերափոխման, ինչպես նաեւ բիզնեսում արհեստական բանականության կիրառման ոլորտում:

Որպես ծրագրի ֆինանսական գործընկեր՝ Հայէկոնոմբանկը կառավարում էր ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի շրջանառու ֆոնդը: Բանկը ներգրավված էր ծրագրի գրեթե բոլոր փուլերում՝ տրամադրելով խորհրդատվություն, նպաստելով ձեռներեցների ֆինանսական գրագիտության բարձրացմանը եւ աջակցելով ֆինանսավորման գործընթացի նախապատրաստմանը:

Հաջորդ շրջափուլում նախատեսվում է դիտարկել նաեւ Բանկի ակտիվ ներգրավվածությունը ծրագրի մենթորական բաղադրիչում՝ ձեռներեցների ֆինանսական եւ ներդրումային պատրաստվածությունը լրացուցիչ ամրապնդելու, ինչպես նաեւ շրջակա միջավայրի եւ սոցիալական ռիսկերի կառավարման շրջանակում գիտելիքների եւ կարողությունները զարգացնելու նպատակով:

Ծրագրի ավարտին մրցութային ընտրության արդյունքում ընտրվել են 27 հաղթող մասնակիցներ, որոնք հնարավորություն են ստացել մրցակցային պայմաններով օգտվելու ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի շրջանառու ֆոնդի կողմից առաջարկվող ֆինանսավորումից, որը կառավարվում է Հայէկոնոմբանկի կողմից:

«Մենք մեր փոքր բիզնեսը սկսել ենք մեր անձնական միջոցներով՝ խուսափելով վարկի ներգրավումից: Բայց այս ծրագրի շնորհիվ մենք ստացանք բիզնեսի կառավարման կարեւոր գիտելիքներ: Հասկացանք, որ մեր բիզնեսը հասել է մի շատ կարեւոր հանգրվանի, երբ ներդրումները կարող են նպաստել մեր ընդլայնմանը եւ ապահովել մուտք նոր շուկաներ: Մենք սա դիտարկում ենք որպես շատ կարեւոր ներդրում մեր բիզնեսի ապագայի համար: Ներգրավված միջոցների շնորհիվ մենք կարողացանք ստեղծել նոր պրոդուկտ՝ բնական հումքով լիմոնադներ, որոնց պահանջարկն արտաքին շուկայում շատ մեծ է: Իսկապես շնորհակալ եմ Հայէկոնոմբանկին թե՛ շահավետ ֆինանսավորման եւ թե՛ ծրագրի ամբողջ ընթացքում խորհրդատվության եւ աջակցության համար: Սա շատ կարեւոր է ՓՄՁ ոլորտի զարգացման համար», -անդրադառնալով ծրագրի արդյունքներին՝ նշում է սննդի արտադրության ոլորտում գործող AYA բրենդի սեփականատեր Նելլի Պողոսյանը՝ ծրագրի արդյունքում ընտրված 27 ձեռներեցներից մեկը:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է
ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ARCAPAY ՓՈԽԱՆՑՈՒՄ

Շարունակելով ընդլայնել թվային ծառայությունների շրջանակը՝ Հայէկոնոմբանկը միացել է ArcaPay համակարգին:

Բանկի ֆիզիկական անձ հաճախորդները AEB Mobile-ով կարող են կատարել բանկից բանկ ակնթարթային փոխանցում՝ նշելով միայն ստացողի հեռախոսահամարը՝ առանց քարտի կամ հաշվի տվյալների:

Փոխանցման պայմաններն են՝

արժույթ՝ ՀՀ դրամ,

միջնորդավճար՝ 0%,

օրական գործարքների առավելագույն քանակ՝ 10 հատ,

մեկ գործարքի առավելագույն գումար՝ 1,000,000 դրամ,

մեկ գործարքի նվազագույն գումար՝ 500 ՀՀ դրամ,

օրական գործարքների սահմանաչափ՝ 5,000,000 դրամ:

Ինչպե՞ս կատարել հեռախոսահամարով փոխանցում: ArcaPay փոխանցում անելու համար անհրաժեշտ է մուտք գործել AEB Mobile հավելվածի եւ սեղմել + նշանը, ընտրել ArcaPay բաժինը, մուտքագրել ստացողի հեռախոսահամարը կամ ընտրել այն հեռախոսահամարների ցանկից, ընտրել ստացողի բանկը, լրացնել անհրաժեշտ տվյալները եւ սեղմել փոխանցել կոճակը: Ինչպե՞ս ստանալ հեռախոսահամարով փոխանցում: ArcaPay փոխանցում ստանալու համար անհրաժեշտ է մուտք գործել AEB Mobile հավելվածի Մենյու, ընտրել ArcaPay բաժինը, սահմանել Հայէկոնոմբանկը որպես նախընտրելի բանկ: ArcaPay փոխանցում հնարավոր է կատարել նաեւ AEB ONLINE համակարգով: Փոխանցում հնարավոր է կատարել ArcaPay համակարգի մասնակից բանկերին: ArcaPay-ով բանկից բանկ փոխանցումներն անվճար են մինչեւ 2026թ. դեկտեմբերի 31-ը:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է
ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը եւ ակադեմիական համայնքի ներկայացուցիչները մասնակցել են - Հունգարիայում կայացած «QS Higher Ed Summit: Europe 2026» հեղինակավոր գագաթնաժողովին՝ ամրապնդելով միջազգային համագործակցությունը բարձրագույն կրթության ոլորտում:

Գագաթնաժողովի կազմակերպիչը QS (QS Quacquarelli Symonds)-ն էր, որը հայտնի է համալսարանների միջազգային QS World University Rankings վարկանիշավորմամբ:

«QS Higher Ed Summit: Advanced Business Skills Forum» միջոցառման շրջանակում Սարգիս Հայոցյանը հանդես է եկել զեկույցով՝ անդրադարձ կատարելով Հայաստանի բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտներում վերջին տարիներին իրականացված լայնածավալ իրավական եւ համակարգային բարեփոխումներին ու արձանագրված ձեռքբերումներին, «Ակադեմիական քաղաք» ծրագրի տեսլականին, Հունգարիայի եւ, ընդհանուր առմամբ, ԵՄ երկրների հետ համագործակցության զարգացման հնարավորություններին եւ Եվրոպական հետազոտական տարածքին Հայաստանի ինտեգրմանն ուղղված քայլերին: Միջոցառման շրջանակում «Ակադեմիական քաղաք Հայաստան» հիմնադրամի տնօրեն Արմեն Սիմոնյանի եւ QS-ի փոխտնօրեն Բեն Սոութերի միջեւ կնքվել է համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարություն, որով սկիզբ է դրվելու ՀՀ որոշ բուհերի համար QS միջազգային վարկանիշավորման կազմակերպության կողմից խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացին:

«QS Higher Ed Summit: Europe 2026» միջոցառումներին մասնակցել եւ բանախոսությամբ հանդես են եկել 60 երկրների ներկայացուցիչներ՝ ավելի քան 600 համալսարանների ղեկավարներ, գիտնականներ եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

Գագաթնաժողովի շրջանակում կայացել են նաեւ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահի եւ «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրենի առանձին աշխատանքային քննարկումները QS-ի մի շարք ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում նախանշվել են ապագա համագործակցության գործնական քայլերին վերաբերող հարցեր:

ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է ՎԿԱՅԱԳԻՐԸ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը հունիսի 30-ին գումարել է հերթական նիստը:

Հաստատելով նիստի օրակարգը՝ ՀՌՀ-ն քննարկել է հետեւյալ հարցերը՝

1. «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացրած տեսալսողական ծրագրի ծանուցման վերաբերյալ:

2. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ հեղինակազորման վկայագրի գործողությունը դադարեցնելու դիմումի վերաբերյալ:

3. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային եւ մարզային՝ ՀՀ Արմավիրի մարզի տարածքում սփռման մրցույթներ հայտարարելու վերաբերյալ:

4. Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Տավուշի մարզի տարածքում սփռման մրցույթի մասնակիցների ցանկը հրապարակելու եւ հայտերի հրապարակման օր սահմանելու վերաբերյալ:

5. «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ նկատմամբ վարչական ակտի ընդունում (սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 21 վարչական վարույթի եզրափակիչ փուլ):

«Առաջին հարցով ՀՌՀ-ն որոշեց հաստատել «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը:

Այնուհետեւ Հանձնաժողովը որոշեց բավարարել «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ դիմումը եւ 2026 թ. հուլիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել Ընկերությանը 2021 թ. փետրվարի 3-ին տրամադրված հեղինակազորման վկայագիրը:

ՀՌՀ-ն հունիսի 30-ին որոշեց հայտարարել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային եւ մարզային՝ ՀՀ Արմավիրի մարզի տարածքում սփռման մրցույթներ, որոնց մասին մանրամասն տեղեկատվությունը հրապարկված է ՀՀ հրապարակային ծանուցումների «www.azdarar.am» եւ ՀՌՀ-ի «www.tvradio.am» պաշտոնական կայքերում:

Հաջորդ հարցով Հանձնաժողովը որոշեց հրապարակել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Տավուշի մարզի տարածքում սփռման մրցույթի մասնակիցների ցանկը ՀՌՀ-ի պաշտոնական կայքում եւ հուլիսի 8-ը սահմանել մրցույթի մասնակիցների հայտերի հրապարակման օր:

Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Տավուշի մարզի տարածքում սփռման մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել «ԷՖ-ԷՄ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովն իրականացրել է «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» տեսալսողական ծրագրի 2026 թ. հունիսի 3-ի տեսագրության մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրվել են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի եւ «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների հասցվող օգտագործման հետեւանքով առողջությանը վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքի դրույթների պահանջների առերեւույթ խախտման հատկանիշներ: Արձանագրության համաձայն՝ Հեռարձակողի ծրագրով հունիսի 3-ին հեռարձակված «Շնագայլ» ֆիլմը պարունակել է ծխելու տեսարաններ, սակայն ֆիլմի մեկնարկը չի ուղեկցվել «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

Հանձնաժողովը որոշեց «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 33-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 100.000 ՀՀ դրամով:

Սույն որոշումները ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովին կամ ՀՀ վարչական դատարան»,- ասվում է հաղորդագրությունում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆՉԵԼՈՏԻՆ ԻՆՉ Է ԱՄԵԼ

Բրազիլիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին մեկնաբանել է աշխարհի առաջնության 1/16 եզրափակիչում Ճապոնիայի նկատմամբ տոնած կամային հաղթանակը (2-1): Հիշեցնենք, որ «սելեսաոն» հաղթական գոլը խփել է մրցավարի կողմից ավելացված ժամանակում: «Ընդմիջմանը ես խաղացողներին ասացի, որ պետք է համբերատար լինել, քանի որ վաղ թե ուշ մենք գոլ ենք խփելու: Ամենակարեւորը կառուցվածքը պահպանելն էր: Մենք հասկանում ենք, որ ճիշտ ճանապարհով ենք գնում եւ պետք է շարունակենք նույն ոգով: Սկզբում մենք փորձում էինք առավելության հասնել դաշտի կենտրոնում եւ ճեղքել գծերը: Դա չաշխատեց, քանի որ նրանք շատ խիտ էին պաշտպանվում: Ընդմիջմանը մենք փոխեցինք մոտեցումը՝ մրցակցի տուգանային հրապարակ ավելի շատ ներթափանցելու նպատակով: Սկսեցինք ավելի շատ փոխանցումներ կատարել եզրերից եւ ավելի լավ միանալ գրոհներին: Սկզբում մեզ համար դժվար էր ազատ տարածություններ գտնել, բայց մենք շատ լավ լուծեցինք այդ խնդիրը»,- ըստ arm-sport-ի՝ իտալացի մասնագետի խոսքերն է մեջբերում The Guardian-ը:

Նշենք, որ Մունդիալի 1/8 եզրափակիչում Բրազիլիայի հավաքականն ուժերը կչափի Կոտ դ'Իվուար-Նորվեգիա զույգի հաղթողի հետ:

ՆԻԿՈ ՊԱՍԻ ԱՊԱԳԱՆ

Մադրիդի «Ռեալը» իր պաշտոնական կայքում հայտարարություն է տարածել՝ տեղեկացնելով, որ արգենտինացի հարձակվողական ոճի կիսապաշտպան Նիկո Պասը 2026/27 մրցաշրջանում կշարունակի ելույթները իտալական «Կոմոյի» կազմում, գրում է arm-spor-ը: «Սերուցքայինները» նշել են, որ Նիկո Պասն անձամբ է ցանկություն հայտնել եւ խնդրել մնալ «Կոմոյում»: Միեւնույն ժամանակ, մադրիդյան ակումբն իրեն իրավունք է վերապահել մեկ տարի անց հետ գնելու ֆուտբոլիստի տրանսֆերը:

«Կոմոյի» կազմում անցկացրած 75 հանդիպումներում Պասը դարձել է 19 գոլի եւ 17 գոլային փոխանցման հեղինակ: Transfermarkt պորտալը 21-ամյա արգենտինացու տրանսֆերային արժեքը ներկայումս գնահատում է 80 միլիոն եվրո:

Հիշեցնենք, որ նախորդ մրցաշրջանի արդյունքներով «Կոմոն» Իտալիայի Ա Սերիայում զբաղեցրել է չորրորդ հորիզոնականը եւ նվաճել Չեմպիոնների լիգայի ուղեգիր:

● *Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում հուլիսի 4-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Կարմիր գլխարկը» տիկնիկային ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է Կյանքի խոսք եկեղեցին համարվում աղանդ, չէ՞ որ շատ մարդիկ վկայում են իրենց կյանքում եղած հրաշքի մասին:

Ամալյա Գրիգորյան, 51 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ մարդիկ անտեղյակ են եւ չգիտեն թե ինչով է տարբերվում Կյանքի խոսք աղանդը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցուց: Նրանք մերժում են Մյուռոնը: Նրանք մերժում են նաեւ եկեղեցին, որը հաստատեց Քրիստոս վերնատան մեջ: Նրանք մերժում են նվիրապետական կարգը, որը հաստատեցին Քրիստոս եւ իր առաքյալները: Նրանք մերժում են սրբերի բարեխոսությունը, մերժում են սրբազան ավանդույթը: «Կյանքի խոսք» աղանդը համարվում է տոտալիտար, այսինքն՝ քայքայիչ գործունեություն ծավալող մի կազմակերպություն, որը վտանգում է մարդու եւ հասարակության հոգեւոր առողջությունը: Այսօր շատերն են հարցնում, թե ինչո՞ւ է աղանդ համարվում, չէ՞ որ նույն բանն է քարոզում, ինչ հայ եկեղեցին: Քարոզում է սեր, առաքինություն, բարություն եւ այլն: Այս հարցին ի պատասխան առաջանում է մեկ այլ՝ պարզ տրամաբանական հարց. «Իսկ չարը, որ գալիս է, ասո՞ւմ է ես չարն եմ, սատանան, հետեւեք ինձ», թե՞ ներկայանում է, որպես սուրբ, բարի, առաքինի: Բնական է, որ պիտի ասեն մենք նույն բանն ենք քարոզում, ոչ մի բանով չենք տարբերվում հայ եկեղեցուց: Ուրեմն հարց տանք. «Եթե նույնն եք, ապա ինչո՞ւ միասին չեք, ինչո՞ւ եք առանձին գործում, ինչո՞ւ եք վերամկրտում հայ եկեղեցում մկրտվածին»:

Հաճախ ենք լսում այսպիսի արդարացում. «Մենք ընդունում ենք Սուրբ Երրորդությունը եւ եթե ընդունում ենք այն, ապա աղանդ չենք»: Մարդիկ զարմանում են. Մի՞թե Ս. Երրորդությունը ընդունողին կասեն աղանդավոր, սա անտեղյակություն է, կամ էլ չգիտեն եկեղեցու պատմությունը: Ի դեպ, սկսենք պատմությունից ու հասկանանք, թե ո՞վ չգիտի կամ չի ուզում իմանալ պատմությունը: Ավետարանը վկայում է, որ Քրիստոս իշխանություն տվեց իր աշակերտներին մեղքերին թողություն տալու, բժշկելու եւ մկրտելու: Շատ կարեւոր փաստ է, իշխանություն տրվեց բացառապես ձեռնադրությամբ եւ միայն առաքյալներին: Ավետարանում չկա ոչ մի դեպք, երբ մարդը դառնում է քարոզիչ կամ հովիվ՝ առանց ձեռնադրության: Քրիստոս իր աշակերտներին ձեռնադրեց, աշակերտներն էլ իրենց հերթին ձեռնադրեցին սարկավագների, երեցների ու հովիվների: Այդ նույն իշխանությունը առաքյալները Սուրբ Հոգու շնորհով փոխանցեցին իրենց հաջորդներին, այդ իշխանությունը ստանում է նաեւ այսօր ձեռնադրվող հոգեւորականը: Այսպես կազմավորվեց Եկեղեցու նվիրապետական կառույցը: Ոմանք հիշում են Պողոս առաքյալին եւ մատնացույց անում, թե ինչպես Պողոսը տեսիլք տեսավ ու տեսիլքով դարձավ առաքյալ, սակայն Գործ Առաքելոցի տվյալ հատվածը ուշադիր եւ մինչեւ վերջ կարդալու դեպքում տեսնում ենք, որ Պողոսը ձեռնադրվեց Անանիա առաքյալի կողմից:

Շարունակությունը՝ հաջորդ համարում

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչ կարգով է անցկացվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի վիճակահանությունը:

Գագիկ Ասատրյան, 65 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերի համաձայն հայտարարված զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներին հանրապետական հավաքակայանում կենտրոնացված ձեւով եւ վիճակահանությամբ (բացառությամբ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քաղաքացիների) ըստ զորամասերի ծառայության նշանակման գործընթացն իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Հանրապետական հավաքակայանում ուսումնասիրվում են հանրապետական հավաքակայան ներկայացված քաղաքացիների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 31-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների առկայությունը, ինչպես նաեւ առողջական վիճակը, որի արդյունքներով անհրաժեշտ փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում քաղաքացին կարող է վերադարձվել տարածքային ստորաբաժանում: Պարտադիր զինծառայողների՝ ըստ զորամասերի ծառայության նշանակվելուց հետո զինված ուժերի գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության համապատասխան տարածքային տարածքային ստորաբաժանումներ է ուղարկում զորակոչված անձանց անվանացուցակը՝ նշանակված զորամասերի պայմանական համարների գրառումներով: Ստացված անվանացուցակները տարածքային ստորաբաժանումներն անհապաղ փակցնում են քաղաքացիների համար տեսանելի վայրերում:

ՀՀ ՊՆ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում բախվել են «Nissan Tiida»-ն եւ «Chevrolet»-ը. վերջինը կողաշրջվել է. կա 1 զոհ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 7 + 12 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 6 + 10 + 20 + 24
	Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 25 + 28
	Գեղարքունիք	+ 7 + 11 + 18 + 22
	Լոռի	+ 7 + 12 + 22 + 25
	Տավուշ	+ 8 + 12 + 22 + 25
	Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 + 19 + 23
	Արագածոտնի նախալեռներ	+ 11 + 16 + 24 + 29

	Արարատ	+ 14 + 17 + 28 + 30
	Արմավիր	+ 16 + 19 + 29 + 32
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 18 + 22
	Վայոց ձորի նախալեռներ	+ 15 + 19 + 29 + 32
	Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 18 + 21
	Սյունիքի նախալեռներ	+ 12 + 15 + 22 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 29 + 32
	Երեւան	+ 17 + 19 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*